# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

Հարգելի՛ ուսուցիչներ,

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ: Թերևս դժվար է պատկերացնել մեր երազած Հայաստանի կերտման բարդ ուղին՝ առանց ձեր նշանակալի ներդրման ու գործուն մասնակցության:

Ես բազմիցս խոսել եմ կրթական ոլորտում առկա արատավոր երևույթների մասին, բայց միևնույն ժամանակ վստահ պիտի ասեմ, որ ձեզանից շատերի նշանակալի ավանդն եմ տեսնում այսօրվա կիրթ, բանիմաց և իրենց իրավունքների կիրարկման նկատմամբ պահանջատեր բազմահազար երիտասարդների դաստիարակության գործում:

Այսուհետ իհարկե մեր գիտակից հանրությունը ձեզանից կարող է պահանջել ավելին, բայց միևնույն ժամանակ նա գնահատելու է ձեր բոլորի ձեռքբերումները՝ որպես ավելի բարձր որակներ ունեցող հասարակության կերտողի:

Այն հիացմունքն ու ուշադրությունը, որ կզգաք ձեր անձի հանդեպ այս օրը, թող որ անկեղծությամբ և սիրով արտահայտվի ամեն օր, որպեսզի լինեք գնահատված, սիրված և ձեր գործում՝ լավագույնս արժևորված:

Հարգանքով

Ռ. Պետրոսյան